ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻԵՎՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА

ЗАМЕСТИТЕЛЬМИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE,CULTURE AND SPORT

DEPUTY MINISTER

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարականտուն2, Հեռ./Тел./Tel.010520632, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am,www.escs.am

N«»_____ **_____ 2020թ._____**

«Ինֆորմացիայի ազատության կենտրոնի»
նախագահ Շուշան Դոյդոյանին
Հասցե՝ Երևան, Կենտրոն, Բուզանդի 1/3
Հեռ.+374 91407836, Էլփոստ՝ sh.doydoyan@icloud.com,

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ուղղված 2020 թվականի օգոստոսի 31-ի Ձեր հարցման՝ տեղեկացնում ենք, որ հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայումը կատարվել է միջազգային կառույցներից ստացված դրամաշնորհի, վարկային ծրագրի և ՀՀ պետական բյուջեի միջոցներով՝ հետևյալ երկու ծրագրի շրջանակում.

1.Հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայումը հումանիտար և հասարակագիտական բնագավառների համար իրագործվում է Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ-ի կողմից՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավում» վարկային ծրագրի «Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով» ենթածրագրի շրջանակում: Այս ենթածրագրով վերանայվում են հետևյալ 6 ուսումնական ոլորտների առարկայական չափորոշիչները և ծրագրերը.

- Հայոց լեզու, գրականություն
- Օտար լեզուներ
- Հասարակություն, հասարակական գիտություններ
- Արվեստ
- Տեխնոլոգիա
- Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն:

Վերոնշյալ ոլորտների առարկայական չափորոշիչները և ծրագրերը վերանայման գործընթացում ներկայումս ընդգրկված են 32 տեղական և 3 միջազգային փորձագետներ, որոնց խորհրդատվական ծառայությունների մատուցման ժամկետը սահմանված է 2019 թվականի հոկտեմբերից մինչև 2021 թվականի հունիս ամիսը: Ծրագրում ընդգրկված տեղական և միջազգային խորհրդատուներին առ 01.09.2020 թ.-ը վճարվել է 41180,6 հազար ՀՀ դրամ ներառյալ հարկերը և պարտադիր վճարները, որից վարկային միջոցներից՝ 32944,5 հազար ՀՀ դրամ, իսկ ՀՀ պետական բյուջեի միջոցներից՝ 8236,1 հազար ՀՀ դրամ:

2. Բնագիտամաթեմատիկական (STEM) ուղղությամբ առարկայական չափորոշիչների և ծրագրերի մշակման աշխատանքների ֆինանսավորումն իրականացվել է «Հայաստանում ԵՄ-ն նորարարության համար նախաձեռնություն. կրթության բարելավում՝ հատկապես գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի ոլորտում» դրամաշնորհային ծրագրով՝ համաձայն ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 20-ի ֆինանսավորման համաձայնագիրը հաստատելու մասին» 1469–Ա որոշման:

ԵՄ դրամաշնորհային ծրագիրը՝ «ԵՄ-ն ի նպաստ նորարարության. բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական առարկաների և մաթեմատիկայի կրթության փորձնական ծրագիր», նախատեսված է բարելավելու բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական առարկաների և մաթեմատիկայի դասավանդումը: Ծրագիրն ունի երկու բաղադրիչ: Առաջինն ուղղված է աջակցելու ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը.

- լրամշակելու և վերամշակելու 5-12-րդ դասարանների բնագիտական**,** տեխնոլոգիական, ճարտարագիտական առարկաների և մաթեմատիկայի **(STEM)** առնչվող նյութերը՝ տվյալ առարկաների գծով ՀՀ հանրակրթության ուսումնական ծրագրերը, դրանց առնչվող մանկավարժական նյութերը՝ դասագրքերը, ուսուցչի ուղեցույցները, նաև քննությունները կամ քննական ցուցումները,
- Հայաստանի ընտրված մարզ(եր)ում վերապատրաստելու ուսուցիչներին **(**լրամշակված և վերամշակված նյութերի ու դրանցով աշխատելու առաձնահատկությունների վերաբերյալ**)**,
- գործարկելու այդ ուսումնական ծրագրերն ու դրանց առնչվող մանկավարժական նյութերը՝ դասագրքերը, ուղեցույցները Տավուշի մարզում (հնարավոր է նաև Շիրակի մարզում՝ ֆինանսական միջոցների առկայության դեպքում),
- գնահատելու դրանց կիրառման փորձը և տալու դրանց համատարած կիրառման առաջարկներ:

Ծրագրի երկրորդ բաղադրիչն ուղղված է զարգացնելու կրթության որակի վրա ազդող, քաղաքականության մշակման գործընթացում ներգրավված առանցքային կառույցների

կարողությունները: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 10,000,000 եվրո, որից ԵՄ ներդրումը՝ 10,000,000 եվրո:

Դրամաշնորհային ծրագրով նախատեսված գործողություններն իրականացվում են Եվրամիության և Համաշխարհային բանկի կողմից, այդ թվում՝ փորձագետների հետ պայմանագրերի կնքումը, նախատեսված այլ գործողությունների կազմակերպումն ու իրականացումը, անհրաժեշտ վճարումները: Պետությունը ծրագրի շրջանակում հանդես չի գալիս իբրև կնքվող պայմանագրերի կողմ:

Միաժամանակ տեղեկացնենք, որ հանրակրթության առարկայական չափորոշիչները և ծրագրերը վերանայող աշխատանքային խմբերի մասին տեղեկատվությունը հասանելի է ԿԳՄՍ նախարարության կայքում՝ http://escs.am/am/news/6718 http://escs.am/files/files/2020-07-20/afce5d4beb46c33f7b8b67d8cf4db406.pdf:

9/3/2020

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Կատ՝ Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն, Կ. Մանուկյան
Հեռ.՝ 010-52-73-43, 091778891, էլփոստ՝ info@escs.am